Արձանագրություն

(հանդիպումը կայացել է 2024թ. փետրվարի 23-ին)

Հանդիպմանը մասնակցում էին Արմավիրի մարզի «Մայիսյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մանկավարժական խորհրդի անդամներից 24-ը, բացակա՝ 2-ը:

Օրակարգում՝

1.Օրակարգի հաստատում:

(զեկ.՝ Ա.Սարուխանյան)

2. «Մայիսյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի 2024-2028 թվականների թվականների դպրոցի զարգացման ծրագիրը կազմելու առաջարկությունների քննարկում:

(զեկ.՝ Ա.Սարուխանյան)

Օրակարգում՝

1.Լսեցին-Դպրոցի տնօրենի հավակնորդ Ա.Սարուխանյանը ներկայացրեց օրակարգը:

Որոշում է

Ընդունել միաձայն:

Օրակարգում՝

Լսեցին-2.Դպրոցի տնօրենի հավակնորդ Ա.Սարուխանյանի տեղեկատվուությունը «Մայիսյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի 2024-2028 թվականների դպրոցի զարգացման ծրագրի վերաբերյալ: Նա մասնավորապես նշեց, որ իր պաշտոնավարման 5 տարին լրանալու կապակցությամբ վերստին հայտարարվել է դպրոցի տնօրենի մրցույթ, և ինքը՝ որպես մրցույթին մասնակցող հավակնորդ, համաձայն ՀՀ կառավարության 2023թ. փետրվարի 9-ի N181-Ն որոշման և ԿԳՄՍ նախարարի 2022թ. սեպտեմբերի 22-ի N35-Ն հրամանի՝ նախաձեռնել է հանդիպումը՝ մանկավարժական խորհրդի առաջարկությունները հաշվի առնելու, 2024-2028 թվականների դպրոցի զարգացման ծրագրում ներառելու համար:

Ուսուցիչները նշեցին, որ դպրոցում բազմաթիվ դրական փոփոխություններ են եղել. դպրոցական ու արտադպրոցական խմբակները, կահավորված 4 լաբորատորիաները, վերանորոգված ճաշարանը, SS միջոցների հարստացումը, կազմակերպված համադպրոցական և արտադպրոցական միջոցառումները, մրցույթներն ու մեր աշակերտների նվաճումներն ու հաղթանակները ասվածի

վառ ապացույցն են: Ա. Կիրակոսյանն առաջարկեց վերանորոգել հանդիսությունների դահլիճն ու մարզադահլիճը, Գ.Փարսիլյանն էլ առաջարկեց արդիականացնել ու թվայնացնել գրադարանը, վերանորոգել ֆուտբոլի մարզահրապարակը: Սահակյանը նշեց, որ ցանկալի կլինի դպրոցամերձ այգում բացօթյա դասասենյակ ունենալը, իսկ Բեդոյանն ասաց, որ բոլոր դասասենյակներում ուսուցիչներին համակարգիչներ են անհրաժեշտ, իսկ դպրոցին՝ էլեկտրոնային գրատախտակ: Ա. Հակոբյանն ասաց, որ կարելի է լավ սովորողներին խրախուսելու նոր ձևեր մշակել, իսկ Գ. Սարգսյանն ասաց, որ հուսով է՝ տնօրենի հավակնորդ Ա.Սարուխանյանը վեստին կընտրվի և կշարունակի զարգացնել դպրոցի բարոյահոգեբանական մթնոլորտը,

Մանկավարժական խորհուրդը, լսելով տնօրենի տեղեկատվությունը և քննարկելով առաջարկությունները,

ՈՐՈՇՈՒՄ Է

4. Խնդրել Ա.Սարուխանյանին «Մայիսյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի 2024-2028 թվականների դպրոցի զարգացման ծրագիրը կազմելիս իրենց առաջարկությունները հաշվի առնել և ընդգրկել:
5. Առաջարկել Ա.Սարուխանյանին վերընտրվելու դեպքում միջոցներ ձեռնարկել դպրոցի հանդիսությունների դահլիճը և մարզադահլիճը վերանորոգելու ուղղությամբ:
6. Դպրոցում ստեղծել շրջանավարտների խորհուրդ:

Դպրոցի մանկավարժական խորհրդի նախագահ՝ Ա. Սահակյան

քարտուղար՝ Ս.Զարգարյան